

ՄԻ՛ ԴԱՏԵՔ, ՈՐՊԵՍՁԻ ԶԴԱՏՈՒԻՔ

Եղբայրներ մի՛ բամբասե՛ք գիրար: Ան, որ իր եղբայրը կը բամբասէ կամ իր եղբայրը կը դատէ, օրէնքը բամբասած եւ դատած կ'ըլլայ, ապա երբ օրէնքը դատես, ալ դուն օրէնքը կատարող չես, հապա՛ դատաւոր: Միայն մէկ Օրէնսդիր եւ դատաւոր կայ, որ կրնայ փրկել եւ կորսնցնել: Դուն ո՞վ ես, որ ընկերդ կը դատես (Յակոբ. 3. 17-4.12):

Եղբայրներ, սթափիմք մեր խելագարութենէն եւ ոեւէ մէկը անիրաւարար չդատենք, ոչ ալ իրաւունքով՝ անողորմաբար, որպէսզի չըլլայ թէ անողորմներու դատաստանը ընդունիմք:

Եթէ մեղաւոր ու վիրաւոր է ան, որ կը դատես, անով իսկ ողորմութեանդ եւ արցունքներուդ արժանի է եւ ոչ թէ դատապարտութեանդ: Կարեկից եւ ցաւակից պէտք է ըլլայ այնպիսիին եւ ոչ թէ բամբասող: Իսկ եթէ արդար եւ անարատ է դատածդ, պէտք է աւելի վախճալ եւ դողալ անկէ, որովհետեւ ան դատաստանէ եւ բամբասանքէ ազատ ըլլալով, նախանձի կամ չար աչքի պատճառաւ գայն իբրեւ յանցաւոր կը դատես եւ ի լուր ամէնուն գայն իբրեւ մեղաւոր կը բամբասես եւ սուտով կ'արատաւորես անոր արդար ու բարի անունը:

Չե՞ս գիտեր այն, թէ ինչ չափով որ անոր յանցանքները դատես, նոյն չափով դուն ինքդ պիտի չափուիս Դատաւորէն (Տե՛ս Մատթէոս 7.1), որովհետեւ այն մեղքերը, որոնցմով արդարը սուտութեամբ կը բամբասես, ըլլայ շնութեան կամ այլ ծանր ու թեթեւ խօսքերով անոր դատաստանը դուն ինքդ պիտի կրես:

ՈՒՐԱՐ



Բ.–Երկրորդ ձեւը աւելի պարզ, երբ ուրարին կեդրոնակրին կեդրոնական մասը մեր աջ անուրթին տակ առնուի մէկ ծայրը շեղակի կը տարուի կրծքավանդակին վրայով դէպի ձախ ուսը եւ թիկունքէն կ'իջնէ մինչեւ շապիկին ծայրամասը: Իսկ երկրորդ ծայրը՝ այս անգամ շեղակի թիկունքէն բերուելով դէպի ձախ ուսը, կրծքավանդակէն կ'իջնէ դէպի շապիկին առջեւի ծայրամասը:

Թեմական եկեղեցիներուն մէջ երբեմն սարկաւազներու չգոյութեան հետեւանքով, առաջնորդներ նուիրեալ եւ վաստակաշատ ծառայութիւն ունեցող դպիրներուն ուրար կրելու իրաւունքը կը շնորհեն:

Ուրարակիր դպիրներ իրաւունք ունին խնկարկելու, քարոզներ կարդալու եւ սեղանին սպասարկելու: Նոյնիսկ առաջնորդ սրբազանին արտօնութեամբ ձաշու Աւետարանը կարդալու:

Իսկ վերաբերում ընելու իրաւունքը միայն աւագ սարկաւազներուն վերապահուած է:



ՔՈՒ ԽՕՍԵՂ ԽՄ ՈՅԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ԶԱՒԻՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (ՍՂ.119.105)

ԺԵ. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 6 ՄԱՐՏ 2022

ԹԻՒ 10

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՇՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

Ես.33.2-22: Յն. 12.1-13.10 Ստ.5.17-48

ՅԻՍՈՒՍ ԶՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՄԱՏԹԵՈՍԻ 5.17-48

Մի՛ կարծէք, թէ եկայ Մովսէսի Օրէնքը կամ մարգարէներու ուսուցումները ջնջելու: Չեկայ ջնջելու, այլ՝ ամբողջացնելու: Հաստատ գիտցէ՛ք, որ բոլոր Օրէնքն ու մարգարէութիւնը կէտ առ կէտ պիտի իրականանան առանց բառ մը իսկ դուրս ձգելու, մինչեւ գայ այն օրը, երբ այս երկինքն ու երկիրը պիտի անցնին: Ով, որ ամենափոքր պատուիրանն իսկ զանց ընէ եւ ուրիշներուն ալ պատուիրէ նոյնը կատարել, երկինքի արքայութեան մէջ յետինը պիտի նկատուի, իսկ ով, որ գործադրէ պատուիրանները եւ նոյնը ուսուցանէ, մեծ պիտի ըլլայ երկինքի արքայութեան մէջ: Կ'ըսեմ ձեզի, երկինքի արքայութենէն ներս կրնաք մտնել ա՛յն ատեն միայն, երբ Աստուծոյ պատուիրաններուն նկատմամբ ձեր հաւատարմութիւնը փարիսէցիներուն եւ օրէնքի ուսուցիչներուն ունեցած հաւատարմութենէն աւելի ըլլայ:

Լսեր էք, որ անցեալին ըսուած է. «Մի՛ սպաններ, որովհետեւ ան, որ կը սպաննէ, պիտի դատապարտուի»: Իսկ ես կ'ըսեմ ձեզի. Ով, որ առանց պատճառի իր եղբոր դէմ բարկանայ, պիտի դատապարտուի: Ով, որ իր եղբայրը յիմար կոչէ, դարձեալ ատեան պիտի բերուի կամ ան, որ իր եղբայրը անմիտ կոչէ, Գեհեննի կրակին պիտի դատապարտուի: Եթէ զոհի սեղանին վրայ ընծադ Աստուծոյ մատուցանելու ատեն յիշես, որ եղբայրդ վշտացած է քեզմէ, ձգէ՛ ընծադ սեղանին առջեւ, զնա՛ նախ հաշտուէ՛ եղբորդ հետ եւ ապա եկու՛ր եւ ընծադ Աստուծոյ մատուցանէ՛:

Երբ մէկը խնդիր ունի քեզի հետ եւ դատի կը կանչէ քեզ, սկիզբէն համաձայնութեան եկուր անոր հետ, երբ տակաւին ժամանակ ունիս, այլապէս՝ քեզ դատաւորին կը յանձնէ, դատաւորն ալ՝ ոստիկանին եւ բանտ կը նետուիս: Վատահ եղի՛ր, թէ բանտէն պիտի չելլես մինչեւ, որ տուգանքիդ վերջին դահեկանը չվճարես:

Լսեր էք, որ ըսուած է. «Մի՛ շնար»: Իսկ ես կ'ըսեմ ձեզի, թէ ով որ ցանկութեամբ նայի ոեւէ կնոջ՝ արդէն իսկ իր սիրտին մէջ շնութիւն ըրած կ'ըլլայ անոր հետ: Եթէ աջ աչքդ քեզ կը գայթակղեցնէ, հանէ՛ եւ նետէ՛ գայն, որովհետեւ նախընտրելի է, որ անդամներդ մէկը կորսնցնես քան թէ ամբողջ մարմնով դժոխք նետուիս:

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

ԹԵՆՈՂՈՐՈՍ ԶՕՐԱՎԱՐ

Ամասիոյ Սարու գիւղէն՝ բարեպաշտ ծնողքի զաւակ: Կը պատկանէր Մաքսիմիանոսի օրով զինուորներու այն կարգին, որ կը կոչուէր դիռոն, այսինքն «նորամուտ»: Ճամբորդած միջոցին օր մը հանդիպեցաւ ասիական վիշապի մը, զոր սպաննեց նիզակով եւ հաւատքով: Յետոյ, երբ յայտնուեցաւ քրիստոնէութիւնը, քննութեան կանչուեցաւ, համարձակ խոստովանեցաւ ստուգութիւնը, եւ բացի այդ, զիշեր ատեն կրակի տուաւ մեծագոյն աստուածուհի Ռէայի մեհեանը: Այս պատճառաւ սաստիկ քանակով ծնուեցաւ, որ երկնային տեսիլքի մխիթարութիւնն ունեցաւ: Կրկին հարցաքննութենէ վերջ այրեցին սուրբը 306-ին: Նշխարները ամփոփեց Եւսեբիա անունով տիկին մը իր տան մէջ, որ յետոյ եկեղեցիի վերածուեցաւ:

Հայ Եկեղեցոյ տօնացոյցին համաձայն Թեոդորոս Զօրավարին տօնը կը զուգադիպի Շաբաթ՝ 5 Մարտ, 2022-ին:

ՊԱՇՏՈՂՈՒԹԻՒՆԸ

Պահեցողութիւնը մեր բարկութիւնը զսպելն է, հեզութեան ճամբան ընտրելն է, մաքուր եւ ուղիղ սիրտ ունենալն է, մեզմէ վատ մտածումներն ու փափաքները հեռացնելն է, բարեգործութեան կեանք մը ապրիլն է:

(Մեծն Բարսեղ)

ՀԱՐՅՈՒՄ ՊԱՏԱՍԽԱՆ ԲԱԺԻՆ

Պահեցողութիւնը պարտաւորիչ հրահանգ է հաւատացեալներուն համար

Ոչ: Պահեցողութիւնը պարտաւորիչ հրահանգ մը չէ, այլ՝ յանձնարարելի կանոն: Պահեցողութիւնը պէտք է ըլլայ ինքնաբերական նուիրում մը, կամաւոր գոհողութիւն մը ենթակային կողմէ՝ առ Աստուած:

Եկեղեցին պահքի օրեր հաստատած է ժողովուրդը ուղղելու, չափաւորութեան եւ ժուժկալութեան վարժեցնելով՝ Աստուծոյ մօտեցնելու համար: Պահքը, թէեւ պարտաւորիչ չէ սկզբունքով, սակայն եկեղեցոյ վերին իշխանութիւնը հարկ եղած պարագային իր ժողովուրդը որկրամտութեան ախտէն եւ կերուիտումներուն յառաջացուցած մեղքերէն ձերբազատելու համար՝ իրաւասութիւն ունի պահքի օրեր հաստատելու եւ անոնց գործադրութիւնը հետապնդելու: Այդպիսի պարագաներուն, հաւատացեալ ժողովուրդին պարտականութիւնն է հնազանդիլ իր առաջնորդներուն եւ կատարել անոնց թելադրանքները յօժարակամ սրտով:

Պահքի համար սահմանուած են շաբթուան երկու օրերը՝ Չորեքշաբթի եւ Ուրբաթ: Չորեքշաբթին յիշել կուտայ Քրիստոսի մատնութիւնը, իսկ Ուրբաթ օրը՝ յիշատակութիւնն է Քրիստոսի չարչարանքներուն:

Հ Ո Գ Ե Ի Ո Ր Պ Ա Տ Գ Ա Ս

ԵՐԲ ԶՐԿՈՒԻՆՔ ՏԱՐՐԱՎԱՆ ԲԱՆԵՐԷ՝ ԳԻՏԱՆՔ, ՈՐ ՄԵԾ ՕՐԶՆՈՒԹԻՒՆՆԵՐ ԿԸ ՄՊԱՍԵՆ ՄԵԶԻ

Այդ զիշեր բան մըն ալ չբնեցին: Առաքեալները սկզբնական հանգրուանին զրկուեցան քանի մը ձուկեր բռնելէ, բայց յետոյ անոնք իրենք զիրենք դէմ յանդիման գտան՝ իրենց ակնկալութիւնը անդրանձնող մեծ քանակութեամբ ձուկի: Եթէ առաքեալները բռնած ըլլային 10-15 ձուկեր, անոնք յաւելեալ ձուկերու կարիքը պիտի չզգային, եւ ոչ ալ Քրիստոս կարիքը պիտի զգար այդպիսի հրաշք մը գործելու:

ՄԵՐ ՍՈՐՎԵԼ ԻՔ Հ Ո Գ Ե Ի Ո Ր Դ Ա Ս Ը

Երբեմն աստուածային նախախնամութիւնը թոյլ կուտայ որ զրկուիք որոշ պզտիկ բարիքներէ՝ մեզ արժանացնելու համար աւելի մեծ բարիքներու, ճիշդ ինչպէս առաքեալներուն հետ պատահեցաւ: Ասիկա Աստուծոյ յատուկ գործելակերպ մըն է, զոր հաւատացեալ մարդը պէտք է գիտնայ: Հաւատացեալ մարդը պէտք է զրկանքը համբերութեամբ եւ սիրով տանի միշտ յիշելով, որ զրկանքին ետին աստուածային օրհնութիւններ կան մթերուած իրեն համար:

ԱՌԱԿ 4.3

Մի՛ հեռանա՛ք իմ օրէնքներէս, որովհետեւ ես եւս հնազանդ զաւակ եմ ի հօրս եւ սիրելի՛ մօրս աչքին, որոնք կը սորվեցնէին ինձի եւ կ'ըսէին. «Մեր խօսքերը սրտիդ մէջ տեղաւորէ, պահէ՛ մեր պատուիրանները եւ ապրի՛ր»:

ԵԹԷ ԿԱՍ ԵՐԲ ԿՈՒՉԵՍ...

ԵԹԷ ԱՅՆԱՐԿԻ ԶՐԿՈՒԹԻՒՆԸ ՔԵՉ ԿԸ ՎԱՆՅՆԷ, Կարդա՛ր.՝ ՍԱՂՄՈՍ 27

Տէրն է յոյս եւ փրկութիւնս, որմէ՞ պիտի վախնամ ես: Տէրն է կեանքիս ապաւէնը, որմէ՞ պիտի դողամ ես: Չար մարդիկ, որոնք հետս թշնամացած զիս կը հալածեն, փորձեցին միսս ուտել, սակայն իրենք տկարացան եւ ինկան: Նոյնիսկ եթէ ամբողջ բանակ մը վրաս յարձակի, սիրտս վախ պիտի չզգայ, նոյնիսկ եթէ ինձի դէմ ճակատամարտ յարդարուի՝ դարձեալ Աստուծոյ պիտի վստահիմ: Մէկ բան խնդրեցի Տիրոջմէ, եւ սա՛ է աղաչանքս: Կեանքիս բոլոր օրերուն Տիրոջ տան մէջ բնակիլ, ըմբռնել Տիրոջ վայելչութիւնը, եւ զինք պաշտել իր տաճարին մէջ: Նեղութեան ժամանակ իր յարկին տակ պիտի պահէ զիս, իր տաճարը զիս պիտի պատասպարէ, ամուր ժայռի վրայ պիտի կանգնէ զիս: Եւ հիմա գլուխս բարձր պիտի կանգնիմ զիս շրջապատող թշնամիներուս դէմ, եւ ուրախ աղաղակով գոհեր պիտի մատուցանեմ Տիրոջ տաճարին մէջ, պիտի երգեմ ու նուագեմ իրեն համար:

Ո՛վ Տէր լսէ աղաչանքս, երբ քեզ օգնութեան կը կանչեմ, ողորմէ՛ ինձի եւ պատասխան տուր: «Ձի՛ս փնտռեցէք», ըսիր դուն եւ իմ սիրտս քեզի պատասխան տուաւ. «Քե՛զ կը փնտռեմ, Տէ՛ր»: Ինձմէ երես մի՛ դարձներ, բարկութեանդ մէջ մի՛ հեռանար ինձմէ՝ ծառայէ: Դուն, որ ինձի օգնական եղար, մի՛ մերժեր զիս, եւ մի՛ լքեր, ո՛վ Աստուած, իմ փրկիչս: Նոյնիսկ եթէ հայրս ու մայրս զիս լքեն զիտեմ, որ դուն, Տէ՛ր, զիս պիտի ընդունիս: Տէ՛ր, քու ճամբադ սորվեցուր ինձի:

ՇԱՐՈՒՆԱԿԵԼ ՍԱՂՄՈՍԱԳԻՐՔԷՆ